«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ՀՀ, 375012, ք.Երևան, Բուզանդ 1/4, հեռ.՝54-17-89, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100, ՀՎՀՀ 02504913

Թիվ ԵՔԼ-ԳՀԾՁԲ- 24/16 ծածկագրով

«Երքաղլուսյ» ՓԲԸ-ի տնօրենի

Որոշում թիվ 1

ք.Երևան 10.05.2024թ.

Մալուխային գծերի ընթացիկ սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ Պատվիրատու «Երքաղլուսյ» ՓԲԸ-ն 28.03.2024թ.-ին հայտարարել է ԵՔԼ-ԳՀԾՁԲ-24/16 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի 1-ից 13-րդ չափաբաժնով հայտ է ներկայացրել «ԷՆԵՐԳՈՆԱՋ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2024թ.-ի որոշմամբ, Արձանագրություն թիվ 2, կետ 9.1, «ԷՆԵՐԳՈՆԱՋ» ՍՊԸ-ն 1-ից 13-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Պայմանագիր կնքելու մասին որոշումը 12.04.2024թ.-ին հրապարակվել է գնումների ինտերնետային կայքի տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր):

Պայմանագիր կնքելու առաջարկը «ԷՆԵՐԳՈՆԱՋ» ՍՊԸ-ին ներկայացվել է 18.04.2024թ.-ին: Սահմանված վերջնաժամկետում, այն է՝ ներառյալ 26.04.2024թ.-ն, «ԷՆԵՐԳՈՆԱՋ» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագրի օրինակները, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթները՝ «ԷՆԵՐԳՈՆԱՋ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

ԵՔԼ-ԳՀԾՁԲ-24/16 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգը՝ գնահատող հանձնաժողովի 29.04.2024թ.-ի որոշմամբ համարվել է չկայացած՝ պայմանագիր չկնքվելու պատճառով, Արձանագրություն թիվ 3, կետ 3:

ԵՔԼ-ԳՀԾՁԲ-24/16 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 30.04.2024թ.-ին հրապարակվել է Տեղեկագրում:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակցի հրաժարվել է կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԷՆԵՐԳՈՆԱՋ» ՍՊԸ	03309022	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի	-	-	Զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	10.05.2024թ: ԵՔԼ-ԳՀԾՁԲ-24/16

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, և

Ղեկավարվելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, նույն հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԷՆԵՐԳՈՆԱՋ» ՍՊԸ-ին ներառել գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Ա. ԹԵՎՈՍՅԱՆ

Կատարողներ Ա. Արաբյան,
Ա. Մինասյան
Հեռ. 010 54 39 80